VEOLIA
Ջուր

Սիրելի Վեոլիա թիմ,

Ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ COVID-19-ի ընթացքում կատարվող ձեր ամենօրյա ու ինձ համար հերոսական աշխատանքի համար: Այս օրերին ջրամատակարարման համակարգի անխափան ընթացքն ապահովելու համար մասնագիտական փորձառության և հմտությունների կողքին անչափ գնահատելի են ձեր նվիրվածությունն ու անձնական ներդրումը:

Ես՝ որպես «Վեոլիա Ջուր» ընկերության գլխավոր տնօրեն ու նաև որպես Հայաստանի քաղաքացի, անչափ հպարտ եմ, որ մեր թիմակիցները, հաճախ վտանգելով անգամ իրենց առողջությունը, այս պահին էլ շարունակում են աշխատել առաջնագծում՝ հանուն մեր համերկրացիների առողջության կարևորագույն գրավականի՝ անխափան ջրամատակարարման:

Մեր աշխատանքն այսօր կարևոր է առավել, քան երբևէ: Ես հպարտ եմ, որ ձեզանից յուրաքանչյուրի ներդրման շնորհիվ այսօր «Վեոլիա»-ն պատվով է կատարում ազգային անվտանգության նշանակություն ստացած իր ծառայությունը՝ պատրաստ կանգնած է առողջապահության համակարգի և բնակիչների կողքին: Համոզված եմ, որ հենց համախմբված և միահամուռ ուժերով կարող ենք հաղթահարել այս նոր մարտահրավերը ու դուրս գալ հաղթանակած:

Սիրելի թիմ, «Վեոլիա» ընկերությունը գնահատում է ձեր նվիրվածությունն ու բարեխիղճ աշխատանքը և որպես փոքրիկ երախտիք առաջնագծում աշխատող մեր թիմակիցների համար սահմանել ենք նաև պարգևավճարներ: Համոզված եմ ձեզ նման աշխատակիցների հետ, ձեր շնորհիվ մենք կարող ենք գրավել ցանկացած բարձունք:

Անչափ շնորհակալ եմ: Եղեք առողջ. մի մոռացեք, որ ձեր առողջությունն այսօր արդեն ոչ միայն ձեր հարազատների, այլև հազարավոր այլ մարդկանց անվտանգության երաշխիքներից է:

Միշտ Ձեր կողքին՝
Մարիաննա Շահինյան՝
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

ՀՀ, ք. Երևան, 375025, Աբովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vlur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, St. Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vlur.am
Web site: www.veolia.am